ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

06.05.2019թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԱՐԱԴ/2008/02/18*

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն 17.09.2018թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Արա Ռաֆիկի Նազարյանի և Հարություն Մովսիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, որը 17.09.2018թ., մակագրվել է դատավոր Մանուկ Մարգարյանին:

Հայցադիմումում որպես պատասխանողներ Արա Ռաֆիկի Նազարյանի հասցե նշվել է՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Շիրազի 81, իսկ Հարություն Մովսիսյանի հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Իսահակյան փ., տուն 14:

Դատարանի 28.09.2018թ. որոշմամբ վերոհիշյալ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի՝ պատասխանող Արա Ռաֆիկի Նազարյանին Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ, Շիրազի 81 հասցեով 28.09.2018թ. ուղարկված թիվ ԴԴ-26 Ե11685/18 ծանուցագիրը՝ կից փաստաթղթերով, փոստային ծառայության կողմից վերադարձվել է *«փեղափոխված»* նշումով, իսկ պատասխանող Հարություն Մովսիսյանին Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ, Իսահակյան 14 հասցեով ուղարկված ծանուցագիրը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է *«հասցեատերը մահացած է»* նշումով:

Դատարանի 15.10.2018թ. թիվ ԴԴ26 Ե-12493/18 հարցմանն ի պատասխան, ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության Աշտարակի տարածքային բաժնի 17.10.2018թ. թիվ 1756

գրությանը կից ուղարկված մահվան ակտի գրանցման վերաբերյալ 17.10.2018թ. տեղեկանքի համաձայն՝ Հարություն Ալֆրեդ Մովսիսյանը մահացել է 10.04.2017թ.:

Դատարանի 06.02.2019թ. թիվ ԴԴ26 Ե1365/19 գրությանն ի պատասխան, Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի 13.02.2019թ. թիվ 391 գրությամբ հայտնվել է, որ Աշտարակ քաղաքի Շիրազի փողոցի 81 հասցեի բնակիչ Արա Ռաֆիկի Նազարյանը ներկա պահին կալանավորված է և գտնվում է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում:

Դատարանի 01.03.2019թ. թիվ ԴԴ26 Ե-2901/19 ծանուցագիրը ուղարկվել է ՀՀ ԱՆ <<Արմավիր քրեակատարողական հիմնարկ>> *(հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ, Չոբանքարա հողամաս)*՝ պատասխանող Արա Նազարյանին հանձնելու նպատակով, որը ստորագրությամբ ստացվել է 11.03.2019թ.:

Նշված գործողությունների և ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա Դատարանի դատավոր Մ. Մարգարյանի կողմից 20.03.2019թ. որոշում է կայացվել՝ թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործն ըստ ընդդատության՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

Դատարանի կողմից նման որոշման հանգելը պատճառաբանվել է հետևյալ կերպ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21 հոդվածի համաձայն՝ «1. Հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:

Պատասխանող՝ Արա Նազարյանի հաշվառման (փաստացի գտնվելու) վայրի հասցեն է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը՝ ք.Էջմիածին, Չոբանքարա հողամաս (հիմք՝ Աշտարակի համայնքապետարանի 18.02.2019թ. թիվ 391 գրությունը, պատասխանողի հետադարձ ծանուցումը և գործի նյութերը):

Բացի այդ, ըստ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Աշտարակի տարածքային բաժնի 17.10.2018թ. մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի, պատասխանող Հարություն Մովսիսյանը մահացած է:

Դատարանը արձանագրում է, որ պատասխանողը գտնվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, այսինքն՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, հետևաբար դատարանը գտնում է, որ գործը պետք է հանձնել ըստ ընդդատության՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

Դատարանի աշխատակազմի 02.04.2019թ. թիվ ԴԴ-26-Ե 4562/19 գրությամբ հիշյալ քաղաքացիական գործն ուղարկվել է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

11.04.2019թ. նշված քաղաքացիական գործը մակագրվել է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ֆիդանյանին, ում կողմից գործի տարածքային ընդդատության հետ համաձայն չլինելու հիմքով 19.04.2019թ. որոշում է կայացվել թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի հնարավորությունից:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի այլընտրանքային ընդդատության կանոնները: Ի թիվս այլ դեպքերի, հիշյալ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մի քանի պատասխանողների դեմ հայցը հայցվորի ընտրությամբ կարող է ներկայացվել պատասխանողներից որևէ մեկի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողի դեմ, որը չունի հաշվառման վայր, և որի վերջին բնակության վայրն անհայտ է, հայց կարող է ներկայացվել նրա գույքի գտնվելու վայրի դատարան:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ հայցը պետք է ներկայացվի պատասխանողի **հաշվառման (գտնվելու) վայրի** դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման

վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են Օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք ներկայացված հայցադիմումում պահպանվել են Օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Տվյալ դեպքում, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանը, ծանոթանալով դատարան ներկայացված հայցադիմումին և պարզելով, որ այն ներկայացվել է Օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, այն ընդունել է վարույթ, ինչից հետևում է, որ ի սկզբանե քաղաքացիական գործը ընդդատյա է տվյալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հիմք ընդունելով հայցադիմումում նշված պատասխանողների հասցեները:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգիրքը նախատեսում է դատավորի կողմից մինչ հայցադիմումը վարույթ ընդունելը ընդդատության կանոնների պահպանման ստուգումը, այնուամենայնիվ, օրենսդիրը սահմանել է նաև դրանից հետո ի հայտ եկած հանգամանքներով պայմանավորված ընդդատության փոփոխություն, եթե իհարկե այդպիսի նախաձեռնությամբ հանդես է եկել պատասխանողը:

Այսպես, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնել այլ դատարանի քննությանը, ***եթե մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողը առարկում է՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:***

Միաժամանակ հարկ է նշել, որ հիշյալ հիմքով գործն այլ դատարանի քննությանը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ընդդատությունը որոշելու հարցը լուծելու համար, կարող է հանձնվել միայն այն դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները թույլ են տալիս վկայելու, որ գործը վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ: Այսինքն՝ գործում առկա փաստական տվյալներն ու ապացույցները պետք է աներկբայորեն վկայեն այդ մասին:

Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ հաստատվում է, որ գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ դեպքում գործն այլ դատարանի քննությանը

հանձնելու համար անհրաժեշտ է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պատասխանողի առարկության առկայությունը, որը պետք է ներկայացված լինի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Դատարանի դատավոր Մ. Մարգարյանը թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին 20.03.2019թ. կայացրած որոշման հիմքում դրել է Օրենսգրքի 21-րդ հոդվածը և արձանագրել, որ պատասխանողի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, այսինքն՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում գտնվելու հանգամանքը բավարար է՝ գործն ըստ ընդդատության նշված դատարանի քննությանը հանձնելու համար:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, որի էությունը հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ է, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացության է հանգում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Տվյալ դեպքում Դատարանի կողմից կայացված որոշումը իրավական տեսանկյունից հիմնավորված չէ՝ նշված իրավահարաբերությունների նկատմամբ ընտրված և կիրառված իրավական նորմի մասնակի մեկնաբանության պատճառով: Մասնավորապես, դատավոր Մ. Մարգարյանը կայացնելով որոշում և հիմքում դնելով պատասխանողի բնակության վայրի փոփոխությունը, հաշվի չի առել Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն առ այն, որ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար բավարար չէ միայն այն փաստը, որ պատասխանողի գտնվելու վայրն ընդգրկվում է այլ դատարանի դատական տարածքում, ***այլ անհրաժեշտ է, որպեսզի պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկի գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:***

Այսինքն՝ Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, այն է՝

ա. գործը վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

բ. պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը ներկայացրել է առարկություն գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Գտնում եմ, որ վիճելի իրավահարաբերության նկատմամբ Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար որևէ պայման առկա չի եղել, մինչդեռ

օրենսդիրը հենց նշված փաստական հանգամանքներով պայմանավորված է միայն գործն այլ դատարանի քննությանը հանձնելու իրավական կարգավորումը սահմանել, իսկ գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախ, գործը վարույթ չի ընդունվել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ, քանի որ գործում առկա չէ որևէ ապացույց, ըստ որի պատասխանող Արա Ղազարյանը ՀՀ ԱՆ <<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկում է գտնվել մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը, և երկրորդ, պատասխանող Արա Ղազարյանի կողմից ծանուցագիրը ստանալուց հետո էլ որևէ առարկություն չի ներկայացվել և այդ մասին տեղեկատվություն պարունակող որևէ ապացույց գործում առկա չէ:

Բացի այդ, ելնելով Օրենսգրքի իրավակարգավորումներից, Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց և հետագայում այդ մասին Արա Ղազարյանին ծանուցելուց հետո, գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կարող էր կայացնել միայն այն դեպքում, երբ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու պահին պատասխանողի կողմից արդեն իսկ ներկայացված կլիներ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկություն:

Նշվածից ելնելով, անհրաժեշտ է փաստել, որ համապատասխան իրավական և փաստական հիմքերի բացակայության պայմաններում դատարանը որոշում է կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին:

Բացի այդ, անհրաժեշտ է արձանագրել, որ հայցադիմումը ներկայացվել է երկու պատասխանողների դեմ, հետևաբար, Օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, առնվազն նրանցից մեկի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարանը համարվում է իրավասու դատարան: Ուստի, նշված հիմքով քաղաքացիական գործն ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելը հիմնավորված չէ: Ավելին, դատավոր Մ. Մարգարյանի կողմից կայացված որոշմամբ անդրադարձ է կատարվել միայն պատասխանող Հարություն Մովսիսյանի մահացած լինելու հանգամանքին, որևէ հիմնավորում կամ վերլուծություն չներկայացնելով տվյալ պատասխանողի մասով քաղաքացիական գործը ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չլինելու վերաբերյալ, մինչդեռ պատասխանողներից մեկի մահացած լինելու փաստի միայն արձանագրումը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս մասով քաղաքացիական գործը տվյալ դատարանին այլևս ընդդատյա չլինելու համար՝ հաշվի առնելով նաև Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 183-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների առկայությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործի ընդդատությունը որոշելու լիազորությունն իրացնելու համար անհրաժեշտ է, որ դատավորների կողմից կայացվող որոշումները լինեն հիմնավորված, փաստական հանգամանքները՝ ապացույցներով հաստատված, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը գործի ընդդատությունը պետք է որոշի գործով հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ տարածքային ընդդատությունը կարգավորող նորմերի ընտրության և կիրառման միջոցով:

Դատավորների կողմից հիմնավորված որոշումների կայացումը կարևորվում է ինչպես գործի դատական քննությունը ճիշտ կազմակերպելու դատավարական գործընթացի, այնպես էլ գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործն ընդդատյա է ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԱՐԱԴ/2008/02/18 քաղաքացիական գործի նյութերը ուղարկել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ի գիտություն:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ